ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՑԱՆՑԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱԶԱՏ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հոկտեմբերի 6-ի գրությունը, որով Ընկերությունը «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի վերաբերյալ հայտնել է հետևյալը՝

- Երևան քաղաքի Նալբանդյան 13 հասցեից Փավստոս Բուզանդ 1/3 և Դավթաշեն 4-րդ թաղամաս 17/10 հասցեից Դավթաշեն 3-րդ թաղամաս 23/1 հատվածներում խողովակաշարի ազատ թողունակությունը սահմանափակ է և առաջիկա 3 տարիների ընթացքում օգտագործվելու է Ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար, ուստի վարձակալությամբ տրամադրելու հնարավորություն չունի,
- Ուլնեցի 68 հասցեից Դավիթ Անհաղթ 11 և Ահարոնյան 12/3 հասցեից Դավիթ Անհաղթ 11 հատվածներում խողովակաշարի ազատ թողունակությունը սահմանափակ է և առաջիկա 3 տարիների ընթացքում օգտագործվելու է Ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար: Այդ տարածքում առկա է վնասված հատված, իսկ Դավիթ Անհաղթ 11 հասցե մտնող խողովակաշար կամ մալուխային ելք ընդհանրապես չկա,
- Իսակով 10 հասցեից Արգիշտի 4/1 հատվածում խողովակաշարի թողունակություն կարող է տրամադրել միայն Ընկերության կողմից առաջարկված հատվածում

(ուղեգիծ), իսկ մյուս հատվածներում խողովակաշարի թողունակությունը սահմանափակ է և առաջիկա 3 տարիների ընթացքում օգտագործվելու է Ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար,

- Կոմիտաս 35/2 հասցեից Կոմիտաս 51 հատվածում կարող է ազատ թողունակություն տրամադրել միայն Ընկերության կողմից առաջարկված հատվածում (ուղեգիծ), իսկ մյուս հատվածներում խողովակաշարի թողունակությունը սահմանափակ է և առաջիկա 3 տարիների ընթացքում օգտագործվելու է Ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար,
- Հայաստանի Հանրապետության կառավարության շենք 1 հասցեից Դավթաշեն 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյան 109/8 (Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն) և Դավթաշեն 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյան 109/8 հասցեից Տիգրան Մեծի 4 հատվածների Դավթաշեն և Աջափնյակ համայնքներով անցնող, ինչպես նաև Պռոշյան 1 հասցեից մինչև Տիգրան Մեծի 4 հատվածներում ազատ խողովակների քանակը սահմանափակ է, և Ընկերությունը նախատեսում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար դրանք օգտագործել առաջիկա 3 տարիների ընթացքում, այդ իսկ պատճառով վարձակալության հիմունքներով հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակություն նշված հատվածներում տրամադրելու հնարավորություն չունի: Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ Արաբկիր համայնքի Կիևյան 1 հասցեից մինչև Պռոշյան 1 հատվածում խողովակաշարի ազատ թողունակությունը բավարար է և կարող է տրամադրվել վարձակալության,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հոկտեմբերի 7-ի գրությանն ի պատասխան Ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի գրությունը, որով վերջինս, Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից հանրային ամրակցված հեռախոսացանցի գծերի ենթակառուցվածքների գտնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկությունների տրամադրման կարգի պահանջներին համապատասխան, ներկայացրել է խնդրո առարկա հասցեներում գտնվող դիտահորերի համարների, դրանց անձնագրերի և ազատ

խողովակաշարերի քանակների վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ մինչև 10 խողովակներ ունեցող մագիստրալային խողովակաշարերը վերջինս պլանավորում է օգտագործել մոտակա 3 տարիների ընթացքում իր օպտիկամանրաթելային ցանցի ընդլայնման և նոր սերնդի ցանցի կառուցման նպատակով, իսկ այն հատվածները, որոնք Ընկերությունը պատրաստ է տրամադրել վարձակալության՝ առկա են 10 և ավելի ազատ խողովակներ: Բարձրացված հարցի այլընտրանքային լուծում կարող է հանդիսանալ նոր ստորգետնյա խողովակաշարի կառուցումը,

գ) Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի գրությանն ի պատասխան Ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 19-ի գրությունը, որով վերջինս հայտնել է, որ ծառայությունների որակի բարելավման և հասանելիության ընդլայնման նպատակով Ընկերությունը մայրաքաղաքում և մարզերում սկսել է հաջորդ սերնդի FTTH (Fiber to the home) օպտիկամանրաթելային ցանցի կառուցումը: Ցանցի կառուցումը ավարտվել է Դավթաշեն համայնքում, իսկ Արաբկիր և Կենտրոն համայնքներում ընթանում են կառուցման աշխատանքներ, որոնց ավարտը նախատեսված է համապատասխանաբար 2022 թվականի ապրիլի 1-ին և 2022 թվականի ավարտին: Երևան քաղաքի մյուս վարչական շրջաններում ցանցի կառուցումը պլանավորվում է ավարտել մինչև 2023 թվականի ավարտը:

Միաժամանակ, Դավթաշեն և Արաբկիր համայնքներում նոր սերնդի ցանցի արդեն կառուցված, ինչպես նաև Կենտրոն համայնքում կատարված նախագծերում ներառված հատվածներում մայրուղային խողովակաշարերը, որոնցում խողովակների քանակը փոքր է 10-ից, ամբողջովին օգտագործվել են:

Ընկերությունը խնդրել է նաև հաշվի առնել, որ խնդրո առարկա ստորգետնյա ենթակառուցվածքը հիմնականում կառուցվել է անցյալ դարի 50-70-ական թվականներին և տարիների ընթացքում բնական մաշվածության և տարբեր շինարարական կազմակերպությունների կողմից բազմաթիվ հատվածներում հասցված վնասների արդյունքում դարձել է օգտագործման համար ոչ պիտանի և, հայցվող խողովակաշարի երկարությամբ և ժամկետի խիստ սղությամբ պայմանավորված՝ հնարավոր չի եղել առաջյա հետազոտել ամբողջ հետագիծը, ինչի պատճառով տրամադրվելիք հատվածների անցանելիության վերաբերյալ հստակ պատկերացում չկա,

դ) Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի

խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 17-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գերիշխող օպերատորը իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Հանձնաժողովին ապացուցի, որ խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում, իսկ Կանոնների 19-րդ կետի համաձայն՝ եթե դիմումը մերժելու հիմք է հանդիսանում Կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանը, ապա գերիշխող օպերատորը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել հիմքեր առ այն, որ օպերատորի կողմից ենթակառուցվածքի պահանջված հատվածում ազատ թողունակությունը սպառված է կամ կսպառվի իր կարիքների համար դիմումի ամսաթվից հետո 3 տարվա ընթացքում,

ե) որ ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված դիմումը մերժելու պատճառ հանդիսացող հիմնավորումները (այդ թվում՝ կից ապացույցները), Հանձնաժողովի գնահատմամբ, առկա են Ընկերության կողմից «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքեր դիմումով հայցվող խնդրո առարկա այն խողովակաշարերի մասով, որոնք Ընկերությունը նախատեսում է օգտագործել տվյալ դիմումն ստանալուց հետո 3 տարվա ընթացքում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության դիմումով հայցվող՝ Ընկերության այն խողովակաշարերը որտեղ առկա են 10 և ավելի ազատ խողովակներ, վերջինս պատրաստ է տրամադրել վարձակալության, մինչդեռ անհրաժեշտ է իրականացնել առաջյա ուսումնասիրություն, և

հիմք ընդունելով Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընդունել Ընկերության կողմից «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել Ընկերությանը մերժել դիմումը՝ դիմումով հայցվող այն խողովակաշարերի մասով, որոնք Ընկերությունը նախատեսում է օգտագործել դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման ծրագրերի համար:
1. Ընկերությանը՝ 10 և ավելի ազատ խողովակներ ունեցող (ներառյալ Ընկերության կողմից առաջարկված ուղեգծերով հատվածներում) խնդրո առարկա

խողովակաշարերը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության կողմից համաձայնության ներկայացման դեպքում, այն ստանալու պահից՝

1) 23 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել տեխնիկական պայմանի տրամադրման համար անհրաժեշտ ուսումնասիրություններ՝ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության ցանկության դեպքում ներգրավելով վերջինիս ներկայացուցիչներին.
2) 30 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել տեխնիկական պայմաններ, որոնց վերաբերյալ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության համաձայնությունն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, վերջինիս հետ կնքել խողովակների ազատ թողունակության վարձակալության պայմանագիր:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշումը հրապարակվելուց հետո երեսուն օրվա ընթացքում Հանձնաժողովին հասցեագրված միջնորդության հիման վրա կարող է վերանայվել.
2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2021թ.